մի այլ տեղ՝ կարեւոր գործով, ուՏ՝նին վերադառնալով, 'ի 10-ն մայիսի յաւուր կիւրակէի յատուկ հրաւիրակաւ 'ի դիմաց Նորին Բարձրութեան՝ և պաշտօնական հագուստներ հագած անձամբք և կառքով Նորին՝ գնաց Վեհ. Կաթողիկոսն յայցելութիւն Բարձր. փոխարքային, և արժանաւոր պատուով և սիրով ընդունուեցաւ և մեծարեցաւ. և կէս ժամու չափ տեսնուելով՝ նոյն կառքով վերադարձաւ 'ի Վեհարանն։

Ի յաջորդ աւուրն Նորին Բարձրութիւն մեծ իշխանն և փոխարքայն ևս հաճեցաւ փոխադարձ այցելութեամբ պատուել զՆորին Ս. Օծութիւն, և արժանին մեծարանօք ընդունուեցաւ 'ի Նորին Վեհափառութենէ. և կէս ժամէն աւելի տեսակցելով՝ վերադարձաւ։

Ի վերայ բնմի Ս. Սարգիս եկեղեցւոյ Վանուց Երեւանայ ընթերցեալ ճառն.

ՎԵՀԱՓԱՌ ՏԷ՛Ր.

Արդարեւ Հայաստանի այժմեան Մայրաքաղաքն Երեւան, այս քանի անգամ է, որ շնորհաբեր այցելութեամբ մեծի Քահանայապետիդ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ՝ ուրախանայ և բերկրի. այո, և այժմ խսկ բերկրապատար խնդութեամբ լցուած, ամասին Եկեղեցացոյց իւր որդիքը Հոգեւոր Գլխոյդ մօտ, ըստ Աւետարանին տեսանել զիւր ցանկալի քաջ և արթուն Հովուապետդ և լսել քաղցրալուր և փրկարար Հայրական խրատներդ. ուստի և Երրայեցւոց երջանիկ ծերոց և մանկանց նման հեզկխառն ուրախութեամբ "Ովսաննա՜" կարդալով Ձեզ՝ շնորհաւորեմք Ձեր շնորհածաւալ այցելութիւնդ մեր փոքրիկ Հօտին, և ամենայն ջերմեռանդութեամբ հոգւոյ մաղթեմք յԱստուծոյ, որ Հրեշտակի խաղաղութեան յանձնելով՝ Հայոց Ազգին երջանկութիւն պատճառող Թանկագին Ձեր անձը, ուրախ գնաց.ք առ Ձեզ և յաջող վերադարձ։ Առ որ և Մօրս մեր Ս. Եկեղեցւոյ հետ ձայնակից լինելով երգեմք. "Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ"։"

Ատոյց ուղարկեր Բ. Դատարան Թէ Մուխան
Դողբոյին Ներսէսեան. Աբրամ Գէորգեան:

Ի 23 Ապրիլի. 1870 ամ.
յԵրեւան:

Գ-րդ ՏԱՐԵԴԱՐՁ
Ս. ՕԾՄԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՑ Դ.
ՎԵՀ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Ամսոյս 21-րդ օրը՝ յորում էր Գ-րդ Տարեդարձ Ս. Օծման Վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց, Մայր Աթոռոյ մերոյ համայն Ս. Ուխտիս համար մխիթարական և բերկրապատար հրճուանօք լի ծագած էր։

Նոյն օրը՝ ամենայն զգայուն սրտեր և եռանդուն անձինք՝ Ս. Առաքելոցն Բարթուղիմեայ և Թադէի, և Ս. Գրիգորի մեծի Լուսաւորչի արժանաւոր Յաջորդի՝ Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ անձնանուէր և քաջ Հովուապետի և Գլխոյ՝ Տ. Տ. Գէորգեայ Դ-ի՝ 'ի Գահակալութիւն Մայր Աթոռոյս և 'ի Հայրապետութիւն ամենայն Հայոց Օծման Գ-րդ Տարեդարձին առթիւ՝ բարենպատակ և խորին համակրութեամբք յափշտակուած՝ և հասարակաց այնպիսի բարեխնամ Հօր ախրագործութեամբք և բարի բարի անձկութեանց իրական ապացոյցներով ոգե-